



# Մ ՈՒՐԲ Զ ԱԿՈՐ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ

### ՅԻԱՆԱԿԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ

21 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2008

|                          |      |
|--------------------------|------|
| Կիրակնօրեայ ըմբերցումներ | Էջ 1 |
| Կատարեալ Եղեֆ (Ձ.4)      | Էջ 2 |
| Հայրապետական Պատգամ      | Էջ 4 |
| Ծանուցում                | Էջ 8 |

#### ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ (40.18-31)

Որո՞ւ կը նմանցընէք զԱստուած կամ ի՞նչ բանի հետ կը բաղդատէք: Կուռքի՞: Բայց ձուլագործն է որ կուռքը կը ձուլէ, ու ոսկերիչը զայն ոսկիրով կը պատէ եւ արծաթէ շղթաներ կը շինէ անոր համար: Նմանապէս հիւսնը անփուտ ծառի կոճղ մը կ'առնէ եւ իր ճարտարութեամբ կ'աշխատի անկէ անշարժ կուռք մը շինելու: Այնքան տգէ՞տ էք, չլսեցի՞ք կամ ձեզի չպատմուեցա՞ւ երբեք Աստուծոյ մասին, որ երկրին հիմերը դրաւ: Աստուծոյ մասին, որ կը նստի երկրագունտէն ա՛յնքան վեր՝ որ երկրի բնակիչները մարախներու չափ կ'երեւին իրեն: Ա՛ն է որ երկինքը վարագոյրի պէս կը տարածէ եւ զայն վրանի պէս կը կանգնէ իրեն համար: Ինքն է որ իշխանները կը բնաջնջէ եւ երկրի դատաւորները կ'ոչնչացնէ: Բոյսի մը պէս անոնք հազիւ տնկուած կամ ցանուած, եւ տակաւին հողին մէջ չարմատացած՝ կը փչէ անոնց վրայ եւ կը չորնան, ու փոթորիկը զանոնք կը տանի յարդի պէս:

Արդ, «Որո՞ւ կը նմանցընէք զիս, ո՞վ կը հաւասարի ինծի», կ'ըսէ Սուրբը, Աստուած: Երկինք բարձրացուցէք ձեր աչքերը եւ դիտեցէ՛ք. ո՞վ ստեղծեց այս բոլոր աստղերը, եթէ ոչ ան՝ որ զանոնք իրենց անուններով կը կանչէ: Ա՛յնքան մեծ է իր իշխանութիւնը եւ սաստիկ՝ իր զօրութիւնը, որ անոնցմէ որեւէ մէկը դուրս չի գար իր խօսքէն: Ինչո՞ւ կը տրտնջաս ուրեմն, ո՞վ Յակոբ, կամ ինչո՞ւ կը մտածես, ո՞վ Իսրայէլ, ըսելով. “Տէրը իմ

վիճակս չտեսաւ, իմ Աստուածս իրաւունքս մոռցաւ”: Չե՞ս գիտեր, տակաւին չհասկցա՞ր թէ յաւիտենական Աստուածն է ան, որ երկրի սահմանները ստեղծեց.

որ ո՛չ կը յոգնի եւ ո՛չ կը թուլնայ, եւ անքննելի է անոր իմաստութիւնը: Ինքն է որ ոյժ կու տայ յոգնածին, կը զօրացնէ տկարացածը: Նոյնիսկ երիտասարդները պիտի յոգնին ու թուլնան, եւ կտրիճները՝ յուսալքուին, բայց Տիրոջ ապաւինողները իրենց ոյժերը պիտի վերանորոգեն եւ արծիւներու պէս թեւ ու թռիչք ունենան. պիտի վազեն առանց թուլնալու, պիտի քալեն առանց յոգնելու:

Տիրոջ ապաւինողները իրենց ոյժերը պիտի վերանորոգեն եւ արծիւներու պէս թեւ ու թռիչք ունենան.

#### ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ (4.16-5.10)

Այսուհետեւ համարձակօրէն մօտենանք Աստուծոյ աթոռին, ողորմութիւն եւ շնորհք գտնելու համար, որպէսզի անոնք մեզի օգնեն անհրաժեշտութեան պարագային:

Արդարեւ, ամէն քահանայապետ որ մարդոց մէջէն կ'ընտրուի, պաշտօն ունի մարդոց կողմէ Աստուծոյ հետ յարաբերութեան մէջ մտնելու եւ անոնց մեղքերուն համար նուէրներ եւ զոհ մատուցանելու: Եւ որովհետեւ ինքն ալ մարդ է, կրնայ հասկնալ մարդոց տգիտութիւնն ու փորձութիւնները եւ կարեկցիլ անոնց, քանի ինք եւս նոյն տկարութիւնները ունի: Ատոր համար է, որ ինչպէս ժողովուրդին՝ այնպէս ալ իր սեփական մեղքերուն համար պէտք է զոհ մատուցանէ:

Գիտէք նաեւ թէ ոեւէ մէկը չի՛ կրնար ինքն իրեն քահանայապետութեան պատիւը առնել, այլ Աստուած է որ զայն այդ պաշտօնին կը

կանչէ, ճիշտ ինչպէս Ահարոն կանչուեցաւ: Նոյնպէս ալ Քրիստոս, ինքն իրեն չառաւ քահանայապետութեան պատիւը, այլ զայն ստացաւ Աստուծոյ, որ իրեն ըսաւ. “Դու իմ սիրելի Որդիս ես, այսօր քեզ ծնայ”, իսկ ուրիշ տեղ մը կ’ըսէ. “Դու յաւիտեան փահանայ ես, Մելքիսեդեկ փահանային պէս”:

Իր երկրաւոր կեանքի ընթացքին, Յիսուս մեծ աղաղակով ու արցունքով աղօթեց եւ աղաչեց Աստուծոյ, որ կրնար զինք մահուանէ փրկել: Եւ Աստուած զինք լսեց, որովհետեւ խոնարհ էր, բայց իր չարչարանքներու փորձառութեամբ սորվեցաւ թէ ի՛նչ բան է հնազանդութիւնը: Եւ այսպէս կատարեալ ըլլալէ ետք, յաւիտեանական փրկութեան պատճառ եղաւ բոլոր անոնց համար որոնք իրեն կը հնազանդին, քանի Աստուած զինք քահանայապետութեան կոչած էր, Մելքիսեդեկ քահանային պէս:

Աստուած զինք լսեց, որովհետեւ խոնարհ էր

### ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ (18.9-14)

Այս առակն ալ պատմեց անոնց, որոնք կը պարծենային թէ արդար են եւ ուրիշները կ’արհամարհէին: «Երկու հոգիներ տաճար գացին աղօթելու. մէկը՝ փարիսեցի, միւսը՝ մաքսաւոր: Փարիսեցին մէկ կողմ կեցած, առանձին կ’աղօթէր. “Աստուած իմ, շնորհակալ եմ քեզմէ՝ որ ուրիշ մարդոց նման յափշտակող, անիրաւ, շնացող չեմ, կամ այս մաքսաւորին պէս ալ չեմ: Այլ շաբաթը երկու անգամ ծոմ կը պահեմ եւ իմ եկամուտիս տասանորդը

տաճարին կու տամ”: Իսկ մաքսաւորը մէկ կողմ կեցած, աչքերը առանց վեր բարձրացնելու կուրծքը կը ծեծէր եւ կ’ըսէր. “Աստուած, ներէ մեղաւորիս մեղքերը”: Կ’ըսեմ ձեզի, եզրակացուց Յիսուս, ո՛չ թէ փարիսեցին, այլ մաքսաւորը արդարացած

զնաց տուն. որովհետեւ ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ»:

«... ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ»:

### ՅԻՍՆԱԿԻ Ե ԿԻՐԱԿԻ (ԾԻԱԿԱՆ ԵՒ ԿՐՕՒԱԿԱՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԱԵՐ - ԹԻ 34) ԼԴ

#### «ԿԱՏԱՐԵԱԼ ԵՈՒԹ» (Չ.4)

Այս բաժնով պիտի համառօտեմ 20-րդ դարու նահատակ աստուածաբան Տիեթրիխ Պոնտֆֆերրի մեկնաբանութիւնը Մատթէոսի 5.43-48-ի մասին: Մեկնաբանութիւնը կը գտնուի անոր «Աշակերտելուն Գինը» վերնագրուած հոգեւոր եւ իմացական խորունկ հատորին մէջ:

Հատուածը, այսինքն 5.43-48-ը Լերան Քարոզի այն կէտն է, ուր առաջին անգամ ըլլալով կը հանդիպինք «սէր» բառին, որ 5-7-րդ գլուխ երկարած ուսուցումները «կ’ամփոփէ»: Անիկա դրուած է սեփական թշնամիները սիրելու յստակ շրջագիծին մէջ:

«Թշնամի» բառը աշակերտներուն համար պարապ յղացք մը չէր: Անոնք շատ լաւ գիտէին, թէ ի՛նչ կը նշանակէ անիկա:

Զիրենք շրջապատող ընկերութեան մէջ, իրենց հաւատքին պատճառով ամէն օր տեսակ տեսակ թշնամիներու կը հանդիպէին:

Անիկա կը գործածուէր նաեւ Հռոմի համար. իւրաքանչիւր հրեայ Հռոմը կը տեսնէր իբր իր ժողովուրդին քաղաքական թշնամին:

Այս երկու թշնամութիւններուն վրայ կու գար աւելնալու այն մէկը, որուն կը հանդիպի ոեւէ մէկը որ չի մասնակցիր ընկերութեան ընդհանրացած ըմբռնումներուն, եւ կ’ենթարկուի անուանարկումի, նուաստացումի եւ սպառնալիքներու:

Հին Կտակարանին մէջ որեւէ տեղ հաստատում մը չկայ, որ կը պատուիրէ սեփական թշնամիները ատել: Ընդհակառակը, կ’ըսէ Պոնտֆֆերր, թշնամիները սիրելու պատուէրը կը գտնենք, եւ ցոյց կու տայ հետեւեալ համարները. Ելք 23.4, Առ 25.21, Ծն 45.1, Ա. Թգ 24.7, Դ. Թգ 6.22, եւ այլն:

Բայց այս պատուէրը չի վերաբերիր այն պատերազմներուն, որ Աստուծոյ «ընտրեալ ժողովուրդ»ը մղեց ընդդէմ կուրքերու աշխարհին: Յիսուս նոյնատիպ պատերազմներ մղելու պատուէր չի տար: Ատիկա չի նշանակեր, թէ զանոնք կը դատապարտէ, այլ պատերազմներ մղելու աստուածաշնչական խորագոյն սկզբունքը կը յայտնէ:

Յիսուս կը պատգամէ յաղթել թշնամիներուն՝ զանոնք սիրելով:

Ան ժամանակ չի վատներ հարազատները սիրելու մասին խօսելով, այլ թշնամիները սիրելու մասին կը

Յիսուս կը պատգամէ յաղթել թշնամիներուն՝ զանոնք սիրելով:

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԸ

### ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

2-5 ԴԵԿՏԵՄԲԵՐ, 2008  
ԱՆԹԻԼԻԱՍ, ԼԻԲԱՆԱՆ

խօսի, այսինքն անոնց՝ որոնք մեր թշնամիները պիտի մնան՝ հակառակ մեր ցուցաբերած սիրոյն. անոնց՝ որոնք մեզի պիտի չհերքեն որեւէ բանի մէջ, երբ մենք իրենց պիտի ներենք ամէն բանի մէջ. անոնց՝ որոնք մեզ կ'ատեն, երբ մենք կը սիրենք զիրենք. անոնց՝ որոնք այնքան աւելի կ'անարգեն մեզ՝ որքան մենք զիրենք կը պատուենք:

Յիսուս իր հետեւորդները կը հրաւիրէ անսակարկ սէր ունենալու՝ թէ՛ կրօնական եւ թէ՛ քաղաքական թշնամիներուն հանդէպ:

Սակայն ինչպէ՞ս է, որ այս սէրը կը գործէ:

Յիսուս կ'ըսէ. թշնամիները օրհնելով, անոնց բարիք ընելով, առանց պայմանի եւ առանց խտրութեան անոնց համար աղօթելով:

Ան չի խոստանար, թէ թշնամիները որ կը սիրենք, կ'օրհնենք, եւ որոնց բարիք կ'ընենք՝ պիտի չհարաշահեն եւ պիտի չհալածեն: Բայց ան կը վստահեցնէ որ, նոյնիսկ հալածելով, անոնք պիտի չկարենան վնաս հասցնել մեզի եւ նուաճել մեզ, եթէ մենք այս քայլը առնենք անոնց համար մեր աղօթքով, որ անոնց կարիքաւորութիւնը եւ զրկուածութիւնը, յանցաւորութիւնը եւ կորսուածութիւնը Աստուծոյ առջեւ կը դնէ: Ասիկա անոնց փոխարէն կատարուած արարք մըն է, եւ անոնց փրկութեան կը ծառայէ:

Սէրը առ թշնամին՝ գայն կը մօտեցնէ Աստուծոյ հետ հաշտութեան: Եւ այսպիսով սէրը կը դառնայ աւելի անպարտելի:

Թշնամիները սիրելը Յիսուսի հետեւորդները կ'առաջնորդէ դէպի խաչի ճամբան եւ խաչեալին հետ հաղորդութեան: Բայց որքան այս ճամբուն մէջ Յիսուսի հետեւորդները մտնեն, այնքան աւելի յստակ պիտի դառնայ իրենց համար սիրոյ անպարտելիութիւնը: Սէրը աւելի զօրաւոր պիտի յայտնուի քան թշնամիին ատելութիւնը, որովհետեւ Քրիստոսի սէրն է եւ ոչ թէ անձնական կամքէ բխող սէր մը: Այսինքն այն սէրն է, որ իր թշնամիներու փրկութեան համար մինչեւ խաչ բարձրացաւ եւ այնտեղ աղօթեց: Այս սիրոյ մէջ թշնամիները կը տեսնուին իբր եղբայրներ եւ քոյրեր:

Յիսուս կարիքը չէ զգացած խօսելու հարազատները սիրելու մասին: Ատիկա առանց ըսելու արդէն կ'ըլլայ: Թշնամիները սիրելով է, որ Յիսուսի հետեւորդները իրենց ճշմարիտ ինքնութեան մէջ կը յայտնուին:

Արդարեւ, ինչի՞ մէջ կը կայանայ քրիստոնեայ ըլլալը: Այն ոչ-սովորական ընթացքին մէջ, որ Քրիստոսի խաչին ճանապարհն է. խաչն է, որ Քրիստոսի հետեւորդը կը կանգնեցնէ անդին քան այս աշխարհը, եւ անոր այս աշխարհին վրայ յաղթանակ կը պարգեւէ:

Արդ, կատարեալը ան է, որ կը սիրէ՝ ըստ Քրիստոսի օրինակին, այլ խօսքով՝ կը հետեւի անոր խաչի ճանապարհին:

Կատարեալ ըլլալու ճանապարհը ան-սովոր սիրոյ ճանապարհն է:

Հովիւ  
Գ.Ք

Քրիստոնէական ջերմ սիրով, ազգային վառ ապրումներով ու հայրապետական օրհնութեամբ կ'ողջունենք ձեր ներկայութիւնը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն ներս:

Հայրապետական դարաւոր այս Սուրբ Աթոռը կոչուած է «Մեծի Տանն»: Տո՛ւն է այս Աթոռը, ոչ սոսկ սովորական վարչական կեդրոն: Ան ազգի՛ն տունն է, ուր մեր ժողովուրդի բոլո՛ր զաւակները իրենք զիրենք պէտք է զգան իրենց սեփական տան մէջ: Այս հոգեւոր տունը կոչուած է «մեծ» տուն: Անոր մեծութիւնը ո՛չ իր քարին մէջ է եւ ո՛չ կառոյցին, ո՛չ իր Փիղիքական ծաւալին եւ ո՛չ իր նիւթական հարստութեան մէջ, այլ իր ամբողջանուէր ծառայութեան մէջ: Հայ կեանքի բառարանին մէջ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը հոմանիչ է՝ համազգային տեսիլքով զսպանակուած հաւաքական ծառայութեան: Արդարեւ, ամուր հաւատքով շաղախուած ու խոր նուիրումով կենսագործուած իր ծառայութեամբ է որ այս Ս. Աթոռը իր մեծութիւնը կերտած է ու իր հեղինակութիւնը նուաճած թէ՛ հայ կեանքէն եւ թէ՛ միջ-եկեղեցական ու միջ-կրօնական շրջանակներէն ներս:

Նոյն այժմ տեսիլքով շարունակեց ծառայել Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը անցնող վեց տարիներուն՝ հաւատարիմ մեր եկեղեցւոյ դաւանական կեցուածքներուն, հոգեւոր արժէքներուն ու բարոյական ըմբռնումներուն եւ յանձնառու մեր ժողովուրդի սպասումներուն:

Հակառակ Լիբանանէն ներս ստեղծուած քաղաքական անկայուն վիճակին, Միջին Արեւելքի կարգ մը շրջաններէն ներս շարունակուող զինուորական բախումներուն, միջազգայն տնտեսական տագնապին եւ ընդհանրապէս համաշխարհայնացումի յառաջացուցած նոր պայմաններուն ու բացասական հետեւանքներուն, մեր Ս. Աթոռը բարձրագոյն աստիճանի պատասխանատուութեամբ կատարեց իր ծառայութիւնը մեր ժողովուրդին: Մեր միաբանները իրենց նուիրումով, մեր

ժողովականները իրենց խորհուրդներով, մեր բարերարներ իրենց նիւթական օժանդակութեամբ, մեր բարեկամները իրենց բարոյական աջակցութեամբ ու մեր ժողովուրդի զաւակները այս Ս. Աթոռին նկատմամբ ունեցած սիրով իրենց «այրի լուծման» դրին մեր հաւաքական ծառայութեան գանձանակին մէջ: Այս բոլոր ներդրումներուն ներդաշնակ ու սերտ յարակցութեամբ է որ կարելի դարձաւ յատկանշական նուաճումներ արձանագրել ու կարեւոր իրագործումներ կատարել Կաթողիկոսարանի ծառայական դաշտի զանազան բնագաւառներէն ներս:

Այս առիթով Մեր ջերմ շնորհակալութիւնը ու բարձր գնահատանքը կը յայտնենք Ազգ. Կեդրոնական Վարչութեան Կրօնական ու Քաղաքական ժողովներուն, յարակից յանձնախումբերուն, թեմակալ առաջնորդներուն ու Ազգ. Իշխանութեանց, մեր միաբաններուն ու բարերարներուն, որոնք իրենց գործօն մասնակցութեամբ մեր Ս. Աթոռին ծառայական առաքելութեան տուին նոր որակ, նոր ծաւալ ու մղում:

Աւելի քան 500 էջերու վրայ տարածուած Ազգ. Կեդրոնական Վարչութեան Կրօնական ու Քաղաքական ժողովներու գործունէութեան ընդհանուր պատկերը կը գտնուի ձեր տրամադրութեան տակ: Տեղեկագրի մը ծաւալը ոչինչ կ'արժէ. էականը նպատակասլաց ծառայութիւնն է ու այդ ծառայութեան էութիւնը կազմող հաւատքը ու նուիրումը: Այս գիտակցութենէն մղուած, փորձեցինք մեր Ս. Աթոռին ծառայութիւնը վերածել, մեր ժողովուրդի զաւակներու կարիքներուն անմիջական գոհացում տալէն անդին, աշխատանքի նոր ածուներ ու հորիզոններ բացող եւ մեր կեանքին կազմակերպչական հզօրութիւն ու նոր կենսունակութիւն տուող կազմակերպ ու մնայուն գործընթացքի:

Հաւատքի առաքելութիւն ու ազգային ծառայութիւն. գիրար լրացնող ու հարստացնող այս երկու տարածքները ...դարձան մեր Ս. Աթոռին ծառայութեան հէմքը, խորքը ու նպատակը:

Վեց տարիներու մեր աշխատանքին ամփոփ տեղեկագիրը իր այլազան երեսներով վստահաբար կը փաստէ Մեր այս հաստատումը:

սոսկ լողունքներ չեղան, այլ դարձան մեր Ս. Աթոռին ծառայութեան հէմքը, խորքը ու նպատակը: Վեց տարիներու մեր աշխատանքին ամփոփ տեղեկագիրը իր այլազան երեսներով վստահաբար կը փաստէ Մեր այս հաստատումը:

Մեր սպասումն է որ համապարփակ ու իրապաշտ մօտեցումով արժեւորուած կատարէք կատարուած աշխատանքին:

\*  
\*\*

Սակայն, միայն անցեալին չնայինք. կատարուածով չգոհանանք: Անցեալի իրագործումներով ու փորձառութեամբ հարստացած հարկ է նայիլ ապագային՝ վերանորոգ հաւատքով ու տեսիլքով:

Կ'ապրինք արմատական փոփոխութիւններու մէջ գտնուող աշխարհի մը մէջ, ուր խոր տազնապններ ու նոր բեւեռացումներ, աննախատեսելի կացութիւններ ու վտանգալից երեւոյթներ դարձած են մնայուն բազմակրօն ու բազմամշակոյթ ընկերութեան կեանքին մէջ. ուր հակադիր զարգացումներ, այսպէս՝ նոր ինքնութեան փնտռուքը մէկ կողմէն ու արմատներու վերադարձը միւս կողմէն, բարոյական արժէքներու նահանջը մէկ կողմէն եւ հոգեւոր արժէքներու վերագարթօնքը միւս կողմէն, միջազգայինին բացուելու պարտադրանքը մէկ կողմէն ու ազգայինին կառչելու մղումը միւս կողմէն՝ համաաշխարհայնացած աշխարհի ամենէն ցայտուն յատկանիշները դարձած են:

Մեր ազգը, եկեղեցին ու հայրենիքը չեն կրնար անտարբեր մնալ այս զարգացումներուն նկատմամբ: Անհրաժեշտ է քայլ պահել ներկայ աշխարհի հոլովոյթին հետ՝ առանց հեռանալու մեր արժէքներէն, մեր ինքնութենէն: Միթէ այս չէ՞ եղած մեր գոյատեւման ամուր կռուանը, մեր հզօրութեան գաղտնիքը՝ պատմութեան ամենհի փոթորիկներուն մէջ:

Արդարեւ, մեր հաւաքական կեանքին մէջ իր խոր արմատները նետած, մեր ազգին տազնապններով տազնապած, մեր ազգին տառապանքի ճամբէն քալած ու անոր պայքարին ու երազներուն հետ նոյնացած Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, մեր ժողովուրդի պատմութեան այս վճռադրոշմ հանգրուանին, համազգային գերագոյն ու ընդհանրական շահերէ մեկնած կոչուած է առաւել նուիրումով ծառայելու մեր եկեղեցւոյ, ազգին ու հայրենիքին: Մեր Ս. Աթոռին հաւատքի առաքելութիւնը ու ազգային ծառայութիւնը միշտ պիտի ունենայ գիրար ամբողջող ու ամբողջացնող երեք ցուցանիշ՝ եկեղեցաշինութիւն, ազգաշինութիւն ու հայրենաշինութիւն:

ա) Եկեղեցաշինութիւն. սովորական հասկացութեամբ չէ որ կը գործածենք այս բառը: Եկեղեցին սոսկ քար ու ծէս, կառույց ու դաւանանք չէ: Եկեղեցւոյ ինքնա-արտայայտութեան կերպերը պէտք չէ շփոթել անոր էութեան հետ:

իր պատերէն ներս բանտարկուած եկեղեցին կը կորսնցնէ իր ճշմարիտ ինքնութիւնը, իր գոյութեան պատճառը: Եկեղեցին ինքզինք կ'ըլլայ

փարեղէն եկեղեցին պէտք է ծառայէ հոգեղէն եկեղեցւոյ շինութեան:

իր հարազատ էութեամբ իր պատերէն անդին, ժողովուրդի՝ կեանքին մէջ, իր ծառայութեամբ: Այսպէ՛ս պէտք է ըլլայ հայ եկեղեցին՝ հաւատարիմ իր սրբազան կոչումին: Ու մեր ժողովուրդը եկեղեցւոյ ծառայական

ներկայութեամբ պէտք է դառնայ եկեղեցի: Այլ խօսքով՝ քարեղէն եկեղեցին պէտք է ծառայէ հոգեղէն եկեղեցւոյ շինութեան:

բ) Ազգաշինութիւն. հայութիւնը ա՛զգ է եւ ո՛չ թէ համայնքներու ամբողջութիւն: Հայութիւնը ազգ է իր ցեղային արմատներով, մշակութային ինքնութեամբ ու հայրենիքով: Ա՛յս ինքնագիտակցութեամբ հայութիւնը իր մշակոյթը ծաղ-կեցուցած է, իր պատ-

Ազգաշինութիւնը՝ ազգին ցրուած գաւակներուն ներքին միութեան հզօրացումն է ու հաւաքական պատկանելիութեան ամրապնդումը:

մութիւնը կերտած, իր հայրենիքը շինած՝ նոյնիսկ արեան գիտակից վկայութեամբ: Ազգաշինութիւնը՝ ազգին արժէքներուն, աւանդութիւննե-րնեւ, յիշողութեան, սրբութիւններուն ու

երազներուն շողախումն է մեր անհատական ու հաւաքական կեանքին: Ազգաշինութիւնը՝ ազգին ցրուած գաւակներուն ներքին միութեան հզօրացումն է ու հաւաքական պատկանելիութեան ամրապնդումը: Ազգը ապազգայնացնող ու անոր ամբողջականութիւնը ջլատող համաշխարհայնացումի հոսանքին դիմաց մեր ազգը պէտք է ազգաշինութեան մնայուն ընթացքի մէջ ըլլայ: Արդ, ազգաշինութիւնը, իւրաքանչիւր հայուն, իւրաքանչիւր կառոյցին, գաղութին, եկեղեցւոյ ու հայրենի պետութեան մտածողութեան ու գործին, կեանքին ու ծառայութեան առանցքը պէտք է դառնայ:

գ) Հայրենաշինութիւն. հայրենիքը ազգի մը հզօրութեան ու յաւերժութեան ամենէն զօրեղ կռուաններէն մէկն է: Պատմութիւնը ցոյց կու տայ, որ ամէն անգամ երբ կորսնցուցած ենք մեր հայրենիքը, ազգովին տկարացած ենք ու նահանջած՝ որակով թէ քանակով: Հայրենիքին հզօրացումը ամբողջ ազգին հզօրացումն է եւ՝ փոխարարձաբար: Այս գիտակցութեամբ պէտք է գործենք՝ հեռու մնալով Հայաստան-Սփիւռք

գործակցութեան ծիրէն ներս մտածելակերպի ու գործելակերպի երկուութիւն յառաջացնող կեղերոնաճիգ թէ կեղերոնախոյս մօտեցումներէ: Միայն տնտեսական հզօրութեամբ կարելի

էականը՝ հոգեմտաւոր կամուրջներու ամրացումն է Հայաստանի ու Սփիւռքի միջեւ. ծրագրուած, հետեւողական ու ներդաշնակ գործակցութեան յառաջացումն է մեր ազգին երկու հատուածներուն միջեւ:

չէ հայրենիք կերտել. սոսկ պարագայական գործակցութեամբ կարելի չէ հայրենաշինութեան նոր որակ ապահովել: Էականը՝ հոգեմտաւոր կամուրջներու ամրացումն է Հայաստանի ու Սփիւռքի միջեւ. ծրագրուած, հետեւողական ու ներդաշնակ գործակցութեան յառաջացումն է մեր ազգին երկու հատուածներուն միջեւ: Հետեւաբար, հայրենաշինութեան նկատմամբ Սփիւռքը պէտք է լոկ դիտողի կամ հետեւողի կրաւորական վիճակին մէջ ըլլայ, այլ՝ մասնակցողի գործօն դերին մէջ:

Այսօր, փաստօրէն Սփիւռքը վերածուած է բարդ ու խայտաբղէտ իրականութեան մը՝ նոր գաղութներու կազմաւորումով, դասական սփիւռքի առընթեր «Հայաստանեան Սփիւռք»-ի գոյաւորումով եւ նոր գունաթափումներու ենթարկուելով: Արդ, դէպի ինքնաբաւ կեանք ու ինքնակեղրոն մտածողութիւն ընթացող Սփիւռքէն ներս համազգային մտածողութեան զարգացումը, միջ-գաղութային ու Հայաստան-Սփիւռք գործակցութեան ամրապնդումով, հրամայական պահանջ է: Համազգային արժէքներու շուրջ իր կեանքը կազմաւորած եւ ի խնդիր նոյն արժէքներու յաւերժացման պայքարած Սփիւռքը այսօր կարիքը ունի վերակազմակերպման ու վերաշխուժացման՝ իր ներքին կարողականութեան օգտագործումով ու Հայաստանի աջակցութեամբ: Սփիւռքի հզօրացումը Հայաստանի հզօրացումն է:

\*  
\*\*

Այս ենթահողի վրայ կանգնած եւ այս համազգային տեսիլքէն իր մղումը առնելով, մեր Ս. Աթոռը իր ծառայական կոչումին մէջ կարեւորութեամբ նկատի պիտի ունենայ ընդհանրապէս մեր ժողովուրդի եւ մասնաւորաբար Սփիւռքի ներկայ պայմաններէն ու հրամայականներէն յառաջացող կարիքներն ու մարտահրաւէրները: Արդարեւ, անցնող տարիներու մեր հաւաքական փորձառութեան իրապաշտ արժեւորումը եւ «ժամանակներու նշաններուն» ճիշդ ընթերցումը, Մեր

հայեցակէտով, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութեան ղեմաց երեք առաջնահերթ բնագաւառներ ցոյց կու տայ:–

1) Հոգեւոր ու բարոյական արժէքներու կենսագործումը պէտք է մնայառաջնահերթութիւն մեր եկեղեցւոյ առաքելութեան ծիրէն ներս: Արդարեւ, ընտանիք մը, համայնք մը կամ ընկերութիւն մը առողջութեան ստեղծողը պէտք է լուրջ նիւթական հոգսով զբաղուի:

Այլ է պէտք հոգեւոր ու բարոյական հարստութեամբ: Պատմութիւնը ցոյց կու տայ որ հսկայ կայսրութիւններ կորսուեցան պատմութեան փոշիին տակ. սակայն մնացին հոգեւոր ու բարոյական արժէքներու կառուցած փոքր ազգեր:

Այսպէս եղաւ նաեւ մեր «փոքր ածուն»: Ան ո՛չ միայն Բեթղէմէն ճառագայթած արժէքներուն ու ճշմարտութիւններուն առաջին հետեւողը դարձաւ, այլ նաեւ իր կեանքը շողախեց, իր պատմութեան ճամբան լուսաւորեց, իր ինքնութիւնը կերտեց քրիստոնէական արժէքներով: Մեր եկեղեցին դարձաւ կենսատու աղբիւրը ու յանձնառու առաքելը հոգեւոր ու բարոյական արժէքներուն:

Ներկայ աշխարհի այլասերիչ ու ապականիչ հոսանքներուն ղեմաց, մեր ժողովուրդի կեանքը եւս, ամէն տեղ ու ամէն վայրկեան, ենթակայ է այնպիսի ազդեցութիւններու, որոնք մեր ժողովուրդի զաւակները կը հեռացնեն մեր եկեղեցւոյ հոգեւոր ակունքներէն ու բարոյական արժէքներէն: Արդ, պէտք է ընել այնպէս որ հայ ընտանիքը լեցուի մեր եկեղեցւոյ հոգեւոր ու բարոյական արժէքներով եւ աւանդութիւններով, հայ դպրոցին մէջ ջամբուող հայեցի դաստիարակութիւնը ներդաշնակուի կրօնական դաստիարակութեան, հայ երիտասարդը մօտենայ մեր եկեղեցւոյ՝ հոգեւոր արժէքներու իր փնտռութիւն մէջ:

Մեր ժողովուրդի ներկայ մտահոգութիւններուն եւ սպասումներուն ղեմաց իր կոչումը ազդու կերպով իրագործելու համար մեր եկեղեցին հրամայական կարիքը ունինք Վերանորոգման ու լուրջ բարեկարգումի: Խորապէս կը հաւատանք, որ դարաւոր փորձառութեամբ հարուստ ու իր արմատներուն հաւատարիմ, սակայն 21-րդ դարու մարտահրաւէրներուն ու պահանջներուն հաղորդ հայ եկեղեցին միայն պիտի կարենայ դառնալ ճշմարիտ առաքելը հոգեւոր ու բարոյական արժէքներուն հայ կեանքէն ներս: Անհրաժեշտ է հետեւաբար, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը միասնաբար լծուին նման անյետաձգելի աշխատանքին:

2) Հայակերտումը պէտք է դառնայ առանցքային մտահոգութիւն: Սփիւռքի պարտադրեալ գոյավիճակին մէջ, իր արեան կանչով, պահանջատիրական կամքով եւ պայծառ ապագայի տեսիլքով հայ ժողովուրդը որոշեց մնալ պատմութեան թատերաբեմին վրայ: Երկրագունդի տարածքին ցրուած հայու բեկորները, համախմբուած իրենց հոգեւոր, կրթական, մշակութային ու ընկերային կառույցներուն շուրջ, դարձան կազմակերպ գաղութ՝ հայապահպանումը վերածելով առաջնահերթ մտահոգութեան:

Ահա թէ ինչու հայ եկեղեցւոյ կողքին հայ դպրոցին հաստատումը ու այս զոյգ սրբազան կառույցներուն սերտ ու ներդաշնակ գոյակցութիւնը ու գործակցութիւնը, Սփիւռքի տարածքին կրթական օժանդակութեամբ եւ ուսումնական-կրթական աշխատանքներու ծաւալումը պատահական երեւոյթ մը չէր: Ծով գոհոգութեամբ հայ Սփիւռքը հայ դպրոց պահեց ու բարձրագոյն աստիճանի յանձնառութեամբ հայ դպրոցը իր մարդակերտումի ու հայակերտումի առաքելութիւնը կատարեց: Սփիւռքի գոյապայքարին ու ազգային պահանջատիրութեան մէջ հայ դպրոցը վճռական դեր ունեցաւ, եւ ունի՝ առաւել քան երբեք: Արդարեւ, տակաւ աճող ու տարածուող եւ այլասերման վտանգներուն անմիջականօրէն ենթակայ Սփիւռքի մէջ հայ դպրոցի դերը դարձած է ճակատագրական: Իսկ, համաշխարհայնացումի յառաջացուցած կենցաղակերպի, մտածելակերպի ու գործելակերպի նոր պայմանները, մեզ շրջապատող բազմակրօն ու բազմամշակոյթ ընկերութեան յառաջացուցած նոր վտանգները, հայ դպրոցին ենթակայութիւնը պետական-կրթական խիստ պահանջներուն, ու տակաւին հայ դպրոցին ղեմագրաւած տնտեսական դժուարութիւնները, հայ աշակերտութեան թիւի նուազումը եւ հայ ուսուցիչներու պակասը լուրջ տագնապի մատնած են հայ դպրոցը:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր թեմերու ճամբով առաջնահերթ կարեւորութիւն ընծայած է հայ դպրոցին՝ հայակերտումը նկատելով իր առաքելութեան ամենէն էական տարածքներէն մէկը: Անհրաժեշտ է որ հայակերտումը, վերանորոգ շեշտաւորումով ու նոր պայմաններուն համապատասխան մօտեցումով, շարունակէ մնալ հիմնական առաջնահերթութիւններէն մին մեր Ս. Աթոռին առաքելութեան: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցած համասփիւռքեան կրթական համագումարին արտասանած Մեր պատգամին մէջ ըսինք.– «Սփիւռքի մէջ տագնապներէ անցնող հայեցի դաստիարակութեան ողբը միայն պիտի չհիւսնեք, այլ՝ միասնաբար պիտի փորձենք հայեցի դաստիարակութեան ապագան հունաւորող

...մնացին  
հոգեւոր ու  
բարոյական  
արժէքներու  
կառուցած փոքր  
ազգեր:

իրատես քաղաքականութիւն մը ճշդել: Առաջին, մշակելով համազգային կրթական համապարփակ քաղաքականութիւն՝ Հայաստան եւ Սփիւռք միասնաբար: Երկրորդ, յառաջացնելով Սփիւռքի մէջ հայ դպրոցի կրթական համակարգը վերատեսուծեան ենթարկելու ձգտող գործընթաց մը, ուր անպայմանօրէն կարեւոր տեղ գրաւեն հայերէն դասաւանդուող նիւթերու յատուկ նոր դասագրքերու պատրաստութիւնը, հայ ուսուցիչներու կազմաւորումը ու վերաորակաւորումը, հայ դպրոցին վարչակազմակերպչական դրութեան վերանայումը, անոր կրթական մակարդակի բարձրացումը ու տնտեսական վիճակի բարելաւումը»:

Երբ կը հաւատանք հայ դպրոցին հրամայական դերին, որպէս հայակերտումի օճախ, ազգային պահանջատիրութեան ամբողջ ու ազգաշինութեան աղբիւր, ո՛չ մէկ ճիգ պէտք է խնայենք հայ դպրոցին նկատմամբ: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը պատրաստ է այս մարզէն ներս նախաձեռնողի, համադրողի ու կազմակերպողի դերին մէջ ըլլալ: Այս ուղղութեամբ անցնող վեց տարիներու ընթացքին առնուած շարք մը գործնական քայլերը պերճախօս վկայութիւն են մեր Ս. Աթոռին ձեռք ձգած լայն փորձառութեան:

3) Մարդու պատրաստութիւնը աւելի քան երբեք հրամայական անհրաժեշտութիւն է: Ծրագիրը կեանքի վերածողը, տեսիլքը շօշափելի իրականութիւն դարձնողը, նիւթականը արժէքի փոխակերպողը ու հաւատքը գործով թարգմանողը մա՛րդն է: Աստուած որպէս իր

ստեղծագործութեան պսակը մա՛րդը ստեղծեց որպէսզի պահէ, պաշտպանէ ու խնամէ այս տիեզերքը: Արդ, մարդը աստուածատուր կոչում մը ունի, իր աստուածապարգեւ շնորհները ծաղկեցնելու եւ ի սպաս դնելու մարդ-

կութեան զարգացման ու բարօրութեան: Ոեւէ հաւաքականութեան, կրօնի կամ մշակոյթին մեծագոյն հարստութիւնը մա՛րդն է: Հաւատք ու տեսիլք, որակ ու զարգացում, նկարագիր ու կամք ունեցող մա՛րդն է որ պիտի կարենայ ճշմարիտ առաջնորդի, իմաստուն ղեկավարի ու քաջ հովիւի դերը ստանձնել: Եւ մենք որքա՛ն, որքա՛ն կարիքը ունինք նման մարդերու:

Կ'ուզե՞նք մեր եկեղեցին վերանորոգել, անոր հաւատքի առաքելութիւնը կենսագործել, նուիրում ու զարգացում ունեցող հոգեւորականի կարիքը ունինք:

Կ'ուզե՞նք հայ դպրոցը հզօրացնել,

անոր մարդակերտումի ու հայակերտումի առաքելութիւնը իրագործել, կոչումի գիտակցութիւն ունեցող հայ ուսուցչին կարիքը ունինք:

Կ'ուզե՞նք մեր մշակոյթը ծաղկեցնել, մեր մշակութային ժառանգութեան ամբողջական ճանաչումը ունեցող մտաւորականներու ու արուեստագէտներու կարիքը ունինք:

Կ'ուզե՞նք մեր ազգային կեանքը վերակազմակերպել ու մեր կառոյցները արդիականացնել, բարոյական արժէքներով կազմաւորուած, ընդհանրական շահերը անձնական շահերէն վեր նկատող, ներկայ աշխարհի պայմաններուն ու խնդիրներուն քաջածանօթ ղեկավարներու կարիքը ունինք:

Հայ մարդուն հիմնական կազմաւորումը հայ կեանքին մէջ է որ տեղի պէտք է ունենայ: Իսկ ազգային կազմաւորումը պէտք է ամբողջացնէ մասնագիտական պատրաստութիւնը, որ անփոխարինելի պահանջ մըն է ներկայ աշխարհին մէջ: Մեր Ս. Աթոռը իր Դպրեվանքին ու Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կեդրոնի, իր կազմակերպած կրթական ու մշակութային համագումարներու ճամբով, եւ երբեմն օտար համալսարաններ աշակերտներ զրկելով լծուած է մարդու պատրաստութեան նուիրական գործին: Այս յոյժ կարեւոր աշխատանքը պէտք է վերանորոգ թափով շարունակուի, որովհետեւ «հունձք բազում են բայց մշակք սակաւք» (Ղուկ. Ժ. 2):

Ահա, եկեղեցաշինութեան, ազգաշինութեան ու հայրենաշինութեան հէնքին շուրջ հիւսուած եւ զիրար ամբողջացնող ու հզօրացնող, Մեր հայեցողութեամբ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան յառաջիկայ տարիներու առաքելութեան երեք հիմնական տարածքները.- հոգեկերտում, հայակերտում ու մարդակերտում: Խորապէս կը հաւատանք որ յիշեալ բնագաւառներէն ներս կարելի է յաջողութիւններ ձեռք ձգել՝ Կաթողիկոսարանութեմ սերտ գործակցութեամբ, մեր ժողովական կառոյցներու ուժական գործունէութեամբ, մեր թեմերու ու բարերարներու նիւթական օժանդակութեամբ, եւ այս բոլորէն առաջ ու վեր՝ հաւաքական հաւատքով ու նուիրումով:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ  
2 ԴԵԿՏԵՄԲԵՐ, 2008  
ԱՌՅԻԼԻԱՍ, ԼԻՐԱՆԱՆ

Ոեւէ հաւաքականութեան, կրօնի կամ մշակոյթին մեծագոյն հարստութիւնը մա՛րդն է:

Ա Մ Ա Ն Ո Ր

ԱՌՎՈՏԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՒ  
ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ  
Հինգշաբթի, 1 Յունուար 2009,  
Առաւօտեան ժամը 11.00–ին:

Ճ Ր Ա Գ Ա Լ Ո Յ Յ

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ  
ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ  
Երկուշաբթի, 5 Յունուար 2009,  
Երեկոյեան ժամը 5.00–ին:

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ  
Երեկոյեան ժամը 7.00–ին:  
ԿԸ ՊԱՏԱՐԱԳԷ

ԱՐԺ. Տ. ԳԱՌՆԻԿ ԲՀՆՅ.  
ԳՈՅՈՒՆԵԱՆ  
(ՀՈՎԻՒՒ)

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐԸ  
ԿԸ ԿԱՏԱՐԵՆ՝

*Խշիշեան Րաֆֆի, Այէմեան Մանուկ,  
Դաւիթեան Րաֆֆի, Մալոյեան Սասուն,  
Իսրայիլեան Ալինա, Յարութիւնեան Մելիսա,  
Փասպար Թալին, Իսրայիլեան Լինէթ,  
Տէմիրճեան Ռուպինա, Քիւլլիւքեան Սերենա,  
Տէմիրճեան Թամար, Գլընճեան Դալար,  
Գոյունեան Մաշտոց, Գոյունեան Կորիւն,  
Պապիկեան Արէն, Պարթեւեան Արամ, Պարթեւեան  
Ճէսիքա, Պապիկեան Սեւակ:*

\*\*\*\*\*

**ՏՆՕՐՀՆԷՔ**

Տնօրհներ փափաքող  
ընտանիքները,  
թող բարեհաճին դիմել  
Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանի,  
հեռաձայնելով 514 331 5445 x203  
թիւին,  
կամ՝ 514 909 5203 թիւին:

**ՏՕՆ ԾԱՆԴԵԱՆ  
ԵՒ  
ՅԱՅՏԱՈՒԹԵԱՆ  
ՏԵԱՌԱ ՄԵՐՈՅ  
ՅԻՄՈՒԽ ԲՐԻՍՏՈՒԽ**

ՍԿԻԶԲ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ  
ԱՌՎՈՏԵԱՆ ԺԱՄԸ 9.30

**ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ**

ԿԸ ՊԱՏԱՐԱԳԷ  
ԵՒ  
ԿԸ ՊԱՏԳԱՄԷ

**ԳԵՐՇ. Տ. ՍՈՒՐԷՆ Ս. ԱՐՔ.  
ԳԱԹԱՐՈՅԵԱՆ  
(ՀՈԳԵՒՈՐ ՏԵՍՈՒՉ)**

Երեքշաբթի, 6 Յունուար 2009  
Առաւօտեան ժամը 11.00

**ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՅ  
ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ  
ԵՒ  
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ**

Չորեքշաբթի, 7 Յոհնուար 2009  
ՍԿԻԶԲ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ ԺԱՄԸ 11.00